

PEARLS OF ARMENIAN HERITAGE

Ղեւոնդ Երէց (շուրջ 725–790)

Մինչեւ 10րդ դար անձանօթ մէկն է Ղեւոնդ Երէց, հակառակ որ ութերորդ դարու դէպքերուն միակ պատմիչը կը ներկայանայ ան: Ձեռագիրներուն մէջ *Պատմութիւն յաղագս երեւելոյն Մահմետի* տիտղոսը տրուած է անոր պատմութեան, բայց իր գործին յիշատակարանը կ'ակնարկէ անոր ընդարձակ ծրագիրով գործի մը՝ “Վարդապետութիւն Ղեւոնդի վասն ժամանակագրաց տանս Թորգոմայ, ի հրամանէ Տեառն Շապիոյ Բագրատունոյ” նկարագրութեամբ: Ենթադրել տալով որ արքունի կամ դրանիկ ժամանակագիրն էր Ղեւոնդ:

Իր գործէն կարելի է ենթադրել որ Եկեղեցական անձնատրութիւն է, գուցէ իր կրթութիւնը ստացած Մաքենեաց վանքին մէջ, եւ արքունիքին հետ շրջած է Տարօն, Վասպուրական, Շիրակ եւ այլ գաւառներ. յունարէն լեզուին ծանօթ կ'երեւի:

Ժամանակագրութիւնը բաժնուած է 42 գլուխներու, բայց ձեռագիրներուն մէջ գլուխները իրարմէ կը տարբերին: 1-էն մինչեւ 33-րդ գլուխներուն մէջ կ'ամփոփէ 632-էն մինչեւ 789 տարիներուն անցուդարձերը. մինչեւ 774 տարին կը խօսի ոչ իբրեւ ականատես դէպքերուն, հետեւաբար շատ ամփոփ է: 774 տարիէն սկսեալ ոճը կը փոխուի եւ կը դառնայ անոր անհատի, ճոխ եւ մանրամասնեալ: Սակայն դէպքերուն լրիւ եւ օրըստօրեայ արձանագրութիւն մը չէ կատարածը: Արձանագրութիւնը կը դադորի 790 տարիով, որովհետեւ տակաւին ողջ կը ճանչնայ Ստեփանոս կաթողիկոսը (789–791):

Ղեւոնդի այս գործին մէջ դրուած են երկու նամակներ (գլուխ 13 եւ 14), Օմար ամիրայէն գրուած Լեւոն Իսաւրացի կայսեր, եւ ասոր պատասխանը այդ նամակին: Դաւանաբանական պարունակութիւն ունին, շօշափելով մահմետական եւ քրիստոնէական կրօնքներուն բարոյական տարբերութիւնները, եւ քրիստոնէականին բարձրութիւնը՝ իսմայէլականին անտեղի կէտերուն նկատմամբ: Այս նամակները ժամանակագրութեան հետ կապ չունին, յունարէնէ հայերէնի թարգմանուած հակաճառական բնոյթի անտեղի եւ կեղծ յօրինումներ են:

Ղեւոնդ ժամանակագիր է եւ ոչ թէ պատմագիր. կ'արձանագրէ դէպքեր առանց փորձելու հասկնալ անոնց բուն ծագումն ու պատճառները: Իր արձանագրած դէպքերուն հետ ունեցած կապը զգացական է, ինչպէս կը տեսնուի արաբներուն կատարած արշաւանքներուն նկարագրութիւններուն մէջ՝ յոյներուն դէմ կամ հայոց, ուրախաոխիթ կամ ցաւագին դէպքերուն:

Գործող հայ իշխաններէն նշանաւոր կը հանդիսանան Սմբատ Կուրապաղատ, Համազասպ Մամիկոնեան, Վարդ Ռշտունի, օրինակի համար, բայց Ղեւոնդ չի հետաքրքրուիր հայոց ներքին խնդիրներով կամ իշխանական ընտանիքներուն միջեւ վէճերով, նոյնիսկ Եկեղեցական կեանքը յուզող հարցերով: Պատերազմներու նկարագրութիւն է՝ քան ժողովուրդի մը կամ երկրին կեանքին:

(Քաղուած Հ. Կիրեղ Վրդ. Քիպարեանի “Պատմութիւն Հայ Գրականութեան” հատորէն)

